

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.  
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԻՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՎԱՅ 1899 ԹԻՎԱՆԻ

## ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

### ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«ՄՇԱԿ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՈՒԹԱՄԱՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսա-  
նը՝ 9 ռ., ինն և ութ ամսանը՝ 8 ռ., եօթ ամսանը՝ 7 ռ., վեց ամսանը՝ 6 ռ., հինգ ամսանը  
5 ռ., չորս ամսանը՝ 4 ռ., երեք ամսանը՝ 3 ռ., երկու ամսանը՝ 2 ռ. և մի ամսանը՝ 1 ռուբլի:  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է վճա-  
րեն տարեկան 6 ռուբլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժա-  
նորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿ»-ն գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՏԱՆԸ (Բաղրամյայ և Բարձրակայա փողոցների անկիւն):  
Կայքերումն ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ն գրվելու համար, և առհասարակ նամակներ և  
ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;  
իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ձ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յետաճանաչութեան փաստեր. Ներքին ՏԵ-  
ՍՈՒԹԻՒՆ. Պրոֆէսոր Գերիլ. Ազգականութիւնը  
Կովկասում. Նամակ Վերին-Ազովիայից. Նամակ  
Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ  
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանական խտուրթիները.  
Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր. ՍՍՌԻՆ  
ԼՈՒՐԵՐ. ՀԵՌԱՎԵՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իմ տպագրութիւն-  
ներից:

#### ՅԵՏԱՄՆԱՑՈՒԹԱՆ ՓԱՍՏԵՐ

Յաւալի է խոստովանել, բայց դա ձշմար-  
տութիւն է, որ հայ ժողովրդի մեծամաս-  
նութեան կենցաղավարութիւնը քանակորդ  
դարի շէնքում ներկայանում է շատ ան-  
մխիթար վիճակի մէջ: Մենք ունենք գրա-  
կանութիւն, մամուլ, զանազան ընկերու-  
թիւններ, համալսարանաւարտ գործողներ,  
բայց մեր ժողովրդական մասսան՝ նոյն իսկ  
արտաքին կուլտուրականութեան կողմից  
գեռ շատ նախնական դրութեան մէջ է:

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի Մ Տ Պ Ա Ռ Ո Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր Ի Յ

#### I

Շվեյցարիան իւրաքանչիւր օտարականի վրա  
մի առանձին տպագրութիւն է դրծում, որ  
աւելի կամ պակաս զօրեղ է լինում՝ նայելով  
թէ այս երկրի բնութիւնը և կուլտուրական պայ-  
մանները որքան տարբեր են այն երկրի բնու-  
թիւնից և կուլտուրական պայմաններից, որ թո-  
ղել է օտարականը: Բայց կարծում եմ, որ ոչ  
մի օտարական այնպէս մեծ, այնպէս ցնցող տը-  
պագրութիւն չէ ստանում, որքան արեւելցին,  
չնորհիւ այն իսկն ամեն կօնորատտի, որ կայ  
այս երկրի և արեւելքի մէջ: Իւրաքանչիւր բուն  
արեւելցի, որ նախապէս ծանօթ չէ եղել եւրօ-  
պական լուսաւոր երկրների հետ և որ յանկարծ  
ընկնում է Շվեյցարիա, մի առ ժամանակ, նոյն  
իսկ մի քանի օր զուրմ է իրան մի տեսակ ապ-  
շուլթեան, չլիւլած վիճակի մէջ, այն աստիճան  
խորթ են այստեղի կենսի երկայնքները, այն-  
քան ցնցող է առաջին տպագրութիւնը:

Ամենից առաջ աչքի զարնողը այս երկրի բը-  
նականների հոգեկան գուարթութեան ընդհանուր  
պատկերն է: Այդ ժպտուն դէմքերը, այդ փայ-

Մի այնպիսի հասարակ պահանջ, ինչպէս է  
մաքրասիրութեան պահանջը, գեռ  
անհասկանալի է մեր մեծամասնութեան  
համար: Բայց մի քանի խոշոր աւաններէն  
և մեծ գիւղերից, մնացած տեղերում ընդ-  
հանուր տեսարանը շատ անպատշաճ է մեր  
ժողովրդի կուլտուրական անուան համար:  
Եթէ վերցնենք բնակարանները և  
կենցաղավարութեան ձևերը, կը տեսնենք  
նոյն պատկերը: Բնակարանները շատ տեղ  
գետնափոր, միացած անասունների դռների  
հետ, զրկված լոյսից և մաքուր օդից, լի  
զանազան միջատներով, դարձնում են ժո-  
ղովրդական կենսի մի կեսապայքանի և ան-  
կիրթ ժողովրդի կենսի: Եթէ աչքի անց-  
կացնենք այն գործիքները, որոնցով մեր  
ժողովուրդը մշակում է իր հողը և արդիւ-  
նաբերում իր տնային պիտոյքների առար-  
կանները, կը համոզվենք, որ եւրօպական  
կատարելագործութիւնները գեռ բոլորովին  
խորթ են մեր երկրագործական ժողովրդին:  
Այդպէս են և ժողովրդական կենսի միւս

լուն ճակատները, որ վիշտը մի հատիկ կնճի-  
չէ կարող դռնել բուն դնելու համար. առեւ թէ  
այս երկրում ցաւ ու հոգ, արտասուք ու լաց  
չը կայ. առեւ կենսի մի ընդհանուր հակադ-  
րան խնձոր է, որ ամեն մէկն աշխատում է,  
որքան կարելի է աւելի զուարճանալ: Արեւելք  
ազգերի և արտասուքի այդ յոգնած ու պառա-  
մայրը, որի երկնակամարի տակ, ինչպէս մի  
հակադրական բանտի կամարների տակ, այնքան  
յաճախ են լսել և լսվում հառաչանքի ու վշտի  
աղաղակներ, և այնքան առատ է արտասուքը,  
որ ամենաքաղաքի զուարէն ճակատին անդամ  
իր օրոշ պատմական թախիծի կնիքն է դրել,  
արեւելեան տխրութեան, մոռալի, անհասկանալի  
ցաւի, յարատեւ յոգնածութեան, անորոշ բայց  
մաշող ձանձրոյթի անջինջ կնիքը: Արեւելքում  
մարդկային խոշոր համախմբումներն անգամ ի-  
րանց ցնձութեան մէջ, իրանց դուարձութեան  
օրերում զարմանալի կերպով պատկերացնում  
են իրանց հայրենիքի այդ բնորոշ գիծը. բայց  
սիրտ, լայնարձակ անհոգ ուրախութիւն պակա-  
սում է նոյն իսկ այդ ժամանակ. ցնձութեան  
աղաղակներէն մէջ հեշտութեամբ կարելի է լսել  
և՛ հեծկտանք, և՛ հառաչանք. տարաբաղդի մէկը  
հէնց ուրախութեան մէջ յանկարծ բռնում է իր  
ցաւոտ սիրտը, յիշում իր սե օրը. ուրախու-  
թեան մի երգն այնտեղ իրանում է տանեակ  
տխուր մեղեդիների մրմունջներով, ժպտուն դէմ-  
քերից շատ են մուշկ ճակատները՝ պաշարված

արտայայտութիւնները, ամեն տեղ գեռ  
ուժեղ է հնի և աւանդականի հեղինա-  
կութիւնը:

Իսկ այդ անկատարութիւնների վրա շատ  
հեշտ կերպով զարգանում են ամեն տեսակ  
ձախուրդութիւններ ժողովրդի համար: Բա-  
ւական է, որ մի տեղ երեւաց մի հիւան-  
դութիւն. նա իսկոյն նպաստաւոր հող է  
գտնում իր զարգացման համար և ճարա-  
կում է ամբողջ գիւղեր: Այլ կարող էր կար-  
ծել, որ հայ գիւղերում տարածված կը  
լինեն վեներական աստուծո: Շատ շատ՝ կա-  
րելի էր սպասել այդ աստուծոյ առանձին և  
բացառիկ դէպքեր: Բայց հետազոտութիւն-  
ները, վիճակագրական տեղեկութիւնները  
ցոյց են տալիս, որ այդ հիւանդութիւն-  
ները վարակել են ամբողջ ընտանիքներ և  
գծաղղացրել նրանց:

Ճիշդ է՝ հայ ժողովուրդը իր կենցաղա-  
վարութեան մէջ փոքր ինչ բարձր է իր հա-  
րեւան քիւրդից և լեռնականից, բայց դա  
շատ քիչ մխիթարութիւն պէտք է լինի  
նրա համար, որովհետեւ փոքր ինչ բարձր  
լինել վայրենի և թափառական կենսիցով  
ապրող ազգերից, դա գեռ քիչ պատիւ է:  
Իսկ ժամանակակից կենսից պահանջ է  
գտնում համեմատութիւններ անել ո՛չ թէ  
վայրենի ազգերի հետ, այլ կուլտուրայի  
ձանապարհի վրա առաջադիմութիւն արած  
ազգերի հետ:

Պատուաբեր չէ հայ ինտելիգենցիայի և  
հայի կրթութեան համար մեր ժողովրդի  
այդ անմխիթար վիճակը: Իսկ նախադիմ  
է, որից ազատվելու համար անհրաժեշտ է  
կանոնաւոր, եռանդուն աշխատանք...

#### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

##### ՊՐՕԳՐԱՄ ԳԵՐԻՒՆ

Նոյեմբերի 29-ին Մօսկվայում տօնվեց Մօսկ-  
վայի համալսարանի և Լազարեան ձեռնարանի  
պրոֆէսոր Վաղվաժիր Իվանովի Գերիլի քա-  
ռաստամեայ դիմապատկերի համարական գոր-  
ծունէութեան ընթացքում Գերիլի ձեռք է բերել  
թէ լայն և ազատ հայեացքների տէր դիմապատ-  
կերի և թէ հասարակական գործիչի հռչակ: Նա  
հիմնեց Մօսկվայում կանանց բարձրագոյն կուր-  
սեր և ամբողջ 23 տարի ձայնաւոր է Մօսկվայի  
գումաղում: Համալսարանում նա կարդում է  
դասախոսութիւններ ընդհանուր պատմութիւ-

ն և մտքերով: Մի խօսքով արեւելքի ուրախու-  
թիւնն անգամ մի բաժակ է, որ քաղցր ու  
զուրկ խառնված են իրար և ուր մարդ քա-  
մում է այդ բաժակը մի անգամ ծաղկալով՝ բայց  
տասն անգամ ան ու հառաչանք արձակելով:

Անա թէ ինչու երբ արեւելքի տխուր միջո-  
րտի դաւակը յանկարծ Շվեյցարիա է ընկնում,  
սկզբում կարծում է, թէ այս երկրի ժողովուր-  
դը ուրախանալուց և զուարճանալուց դուրս  
ոչինչ չը գիտէ, և որ դիմապատկերն ու արուեստի  
այնքան հրաշալիքները, բնութիւնը սասանեցնող  
այդ որոտածայն մեքենաները, լեռների բարձրա-  
բերձ կատարները չանդողդ այդ երկաթուղիներ-  
ը, երկաթուղիների հանրակառքերը, այդ գեղեցիկ  
ձանապարհները լեռներում և անտառներում,  
երկրագործական աշխատանքներին յարմարե-  
ցած ամենամոգ, ամենակատարելագործված մե-  
քենաները, մի խօսքով այն բոլորը, ինչով ի-  
րաւամբ պարծնում է Շվեյցարիան,—այս ժո-  
ղովրդի յարատեւ, յամառ աշխատանքի պտուղ չէ,  
որա մտքի ու ձեռքի գործը չէ, այլ ո՞վ գիտէ,  
ինչ հրաշքով առաջ է եկել աշխարհի այդ չքնաղ  
ժառանգ: Ուրիշ ինչ կարծի խեղճ արեւելցին, երբ  
մի կողմից յիշում է իր հայրենակիցներին՝ թէ և  
զանազան, բայց յարատեւ աշխատանքի մէջ մաշ-  
ված, ճակատները մշտապես հոգեւոր մուշկով  
պատած և այնուամենայնիւ խաղալիք բնութեան  
պատահարների ձեռքին, այնուամենայնիւ զուրկ  
քաղաքակրթութեան բարեքնիքից, զուրկ զուար-

նից, զխառաքալէս միջին և նոր դարերի պատ-  
մութիւնից, իսկ Լազարեան ձեռնարանում կար-  
դում էր դասախոսութիւններ Արեւելքի պատ-  
մութիւնից: Համալսարանական դործունէութեան  
մէջ պրոֆէսոր Գերիլի յայտնի դարձաւ ժանա-  
ւանդ նրանով, որ պաշտպանում էր 1863 թւի  
համալսարանական կանոնադրութիւնը: Իր բազ-  
մաթիւ գիտնական աշխատութիւնների մէջ, ո-  
րոնք մեծ մասամբ տպվեցան «Вѣстникъ Европы»  
ամսագրում, Վ. Գերիլի գեղեցիկ կերպով շա-  
կում էր նիւթը և մոցնում նրա մէջ համա-  
կրելի ուղղութիւն: Լինելով յայտնի պրոֆէսոր  
Պրանովսկու աշակերտը համալսարանի պատմա-  
կան բաժնում, Գերիլի հետևում էր նոյն լայն,  
առաջադիմական ոգուն, որ բառաւանդան թը-  
ւականների լաւագոյն ուսուցիչ գործիչներին էր  
յատուկ: Ի միջի այլոց, յարգելի պրոֆէսորը մի  
յօդուած ունի «Братская помощь» ժողովածուի  
մէջ, որ համակրութեամբ է խօսում հայերի  
մասին, ինչպէս մենք արդէն յիշատակել ենք  
«Մշակ» մէջ:

Յօդեւանի օրը պրոֆէսոր Գերիլին ողջունե-  
ցին Մօսկվայի համալսարանի կողմից րէկտոր  
Ջերմով, պատմական-լեզուաբանական ֆակուլ-  
տետի կողմից պրոֆէսոր Կօրշ, Լազարեան ձե-  
մարանի կողմից դրէկտոր Միլլեր, Դուսայի  
կողմից քաղաքապետ իշխան Պոլիցին: Բայց  
գրանից շնորհաւորական ուղերձներ կարդացին  
նաեւ բազմաթիւ հիմնարկութիւնների ներկայա-  
յուցիչները. ստացվել էին նաեւ շատ հեռավոր-  
ներ զանազան կողմերից: Լինել դիմութեան  
մարդ՝ ամենալայն հայեացքներով և մի և նոյն  
ժամանակ չը կտրվել հասարակութիւնից, այլ  
ծառայել նրան եռանդով՝ հաստատ մնալով իր  
ուղղութեան մէջ՝ դա մի հաղորարէտ երեւոյթ  
է մեր ժամանակներում: Այդ է պատճառը, որ  
նոյեմբերի 29-ի տօնախմբութիւնը յօբելարի  
չուրջն էր հաւաքել ոչ միայն դիմութեան մարդ-  
կանց, այլ և հասարակական զանազան հիմնար-  
կութիւնների ներկայացուցիչներին:

#### ԱՌԱՋԱԿՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Այս վերնագրով ո՞նի պ. Մ. մի յօդուած է  
տպել «Наблюдателю» ամսագրի նոյեմբերի գրքում:  
Ճշմարտն ասած, վերջինով ձեռքը ամառադիրը,  
ես արդէն մտքում որոշել էի, թէ ինչ բնեցեպ-  
տով կարող է պատրաստված լինել «Наблуда-  
телю»-ի մէջ հիւրընկալված յօդուածը, բայց ծանօթ  
լինելով այն ողղութեան, որին հետևում է ամ-  
սագիրը՝ «Moer, Вѣд.» և tutti quanti անշուշտ զի-  
նակիցը: Բայց այս անգամ սխալվեցի և ի հար-

ձութիւնից, կենսի բարեքնիքը վայելելուց.  
մինչդեռ միւս կողմից նա տեսնում է այստեղ  
մի ժողովուրդ, որ լուսաւորութեան, քաղաքակը-  
թութեան բոլոր բարեքնիքը ունի, վայելում է,  
և ակամայից խեղճ արեւելցին հարց է տալիս,  
թէ այս տարօրինակ ժողովուրդը երբ է կարո-  
ղացել այդքան հակադրական գործեր կատարել,  
այդ աստիճան ընկնել բնութեան և դեռ այս-  
քան ազատ լինել հոգից, այդքան ժամանակ  
ունենալ զուարճանալու, ուրախանալու, կենսի  
վայելելու: Թող արեւելցին այս կնճառտ հանե-  
լուիլ լուծել աշխատի, բայց իրողութիւնն այն  
է, որ դիմութեան և արուեստի այս զարմանա-  
լի արդիւնքները, այս ուրախ, կենսալից ժողո-  
ւրդի հանձարի արդիւնքն է, և նա արտագրում  
է այդ բոլոր երգերով, առանց հառաչանքի, ա-  
ռանց արտասուքի:

Այո, գոհ և ուրախ է շվեյցարացին. այստեղ  
երգում են ամենքը՝ մեծը թէ փոքրը, մարդ, թէ  
կին, երգում են աշխատելու, փողոցով, եր-  
գում են դաչուում, անտառում, ձանապարհնե-  
րին: Արեւելցին, որ սովորել է տեսնել իր երկ-  
րում նոյն իսկ երկտասարդին փողոցով անցնե-  
լիս լուրջ դէմքով, ծանրաբարոյ, հոգեբով ծան-  
րաբեռնված, ապշում է, տեսնելով թէ ինչպէս  
այստեղ նոյն իսկ հասակ առած մարդը անց-  
նում է փողոցից սուլելով, կամ մի ուրախ երգ  
մուսուլմով: Նրոյն ու երաժշտութիւնը, ժողովրդ-  
ական տօներն ու զբօսանքները շվեյցարացու





Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.